


ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամեն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացնէ:

Յակ. 1.16-20

Սիրելիներ, ճանչնալէն ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի զրկուինք, երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուինք, զգոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանալով բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատարի գազանէ մը: Զրկայ, թէ ի՞ժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ մեր հոգիներուն, խայթէ մեր կրունկը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները եւ վրէժխնդրութիւնը բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գազանի նման անընտել եւ բոլորին ծաղրանքի առարկայ ըլլայ: Օձերու եւ կարիճներու բնութիւնն է միշտ գազանութեան մէջ մնալը: Անոնք, որոնք որ մօտենան կը զարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը գինէ գանոնք սպաննելու: Անոնց մի նմանիւր դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բռնութեամբ ունին գազանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն: Սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէդ դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գազանութեան: Անոնք իսկ շատ անգամ մարդոցմէ դիւթուած իրենց բնութենէն դուրս գալով ոչ ոքի կը վնասեն: Մինչ քու բարկութիւնդ, ո՛չ աղաչական անոյշ խօսքերը, ո՛չ բարեկամներու աղերսանքները, ո՛չ սիրելիներու խրատը, ո՛չ Աստուծոյ վախը եւ ո՛չ այլ գեհեհի սպառնալիքը կը մեղմացնեն, այլ՝ որոնք որ մօտենաս կը զարնես ու կը վիրաւորես:

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՎԱԿԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ 2.- Պատրաստութիւն ընծաներուն

Ապա գինին կը լեցնէ սկիհին մէջ, կ'օրհնէ եւ կ'ըսէ.- «Ասիկա կը կատարուի՝ յիշելու համար մեր Տիրոջ, մեր Աստուծոյն եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի փրկագործ տնօրինութիւնը, որուն կողմէ քիսած արիւնի աղբիւրէն բոլոր արարածները նորոգուեցան եւ անմահացան: Յալիտեան օրհնաբանեցէք, գովաբանեցէք եւ փառաւորեցէք Ձայն»:

Պատարագիչ քահանան պատրաստել է ետք ընծաները՝ կ'օրհնէ, կը խնկարկէ, նաեւ Ս. Հոգիէն, որ իր շնորհներով ու պարգեւներով զարդարէ բոլոր այն հաւատացեալները, որոնք մասնակից պիտի դառնան Ս. Պատարագին:

Աւագ Սարկաւագը... ...Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՐՏ 2024 ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Երգ. 1.1-2.3: Զք. 9:9-15: Փլայ. 4.4-7: Ստ. 20.29-21.17

ՃԱՂԿԱԶԱՐԴ

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏՔՈՍԻ 20.29-21.17

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիզովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին, որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել:

«Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէ՛ք, որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփագէ, Զիթենաց լեռան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը որկեց՝ անոնց պատուիրելով. «Դացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի գտնէ՛ք իր աւանակին հետ: Բակեցէ՛ք եւ ինծի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէ՛ր անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականացայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա էու թագաւորդ քեզի կու գայ: Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին, ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին քամուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին քամուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջ կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տանար մտաւ եւ դուրս վճռեց բոլոր անոնք, որոնք տանարին մէջ առուծախ կ'ընէին. լուսայափոխներուն սեղանները եւ աղանձվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ դուք գայն աւագակներու որջի վերածած էք»: Տանարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տանարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս, ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր"»:

Ծ Ա Ղ Կ Ա Ջ Ա Ր Դ



Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի ԾԱՂԿԱՋԱՐԴ:

Ծաղկազարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղէմ: Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր: Զիթենիի եւ արմաւենիի նիւղերով կը դիմաւորեն զինք եւ նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անցնի անոնց վրայէն:

Երբ Յիսուս տանար կը մտնէ կը տեսնէ, որ շուկայի վերածուած է ան: Անմիջապէս կը մաքրէ տանարը ու բոյորին կը հասկցնէ, որ տանարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկազարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկազարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի նիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը տուն կը տանին:

Յատկանշական է Ծաղկազարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մովերով:

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

Ս. Յարութեան Տօնը, որ այս տարի կը գուգադիպի Մարտ 31-ին՝ նախորդըւած է Յիսուսի կեանքի վերջին դրուագները յիշեցնող եկեղեցական հանդիսութիւններու ամբողջ շաբաթով մը: Այդ շաբաթը կը կոչուի ԱՒԱԳ ՇԱԲԱԹ, որ կը նշանակէ ամենէն մեծը, ամենէն բարին ու սուրբը: Այդ շաբաթուան իւրաքանչիւր օրը եւս կը կոչուի աւագ՝ ինչպէս Աւագ Երկուշաբթի, Աւագ Երեքշաբթի, Աւագ Զորեքշաբթի, Աւագ Հինգշաբթի, Աւագ Ուրբաթ, Աւագ Շաբաթ, իսկ Կիրակին Ս. Յարութեան օրն է: Յիշուած օրերէն իւրաքանչիւրը կը յիշատակէ Յիսուսի կեանքէն առնուած մասնայատուկ դրուագ մը ու եկեղեցական խորհրդանշական արարողութիւններ կը մատուցուին անոնցմէ իւրաքանչիւրին:

**ՊԷՏՔ Է ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ**  
**ԱՌԱՆՅ ՎՀԱՏԵԼՈՒ**  
**ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ**  
Տէ՛ր իմ եւ Աստուած իմ Դո՛ւն ես իմ օգնականս, Զու ձեռքիդ մէջ եմ ես: Դո՛ւն գիտես իմ օգուտս, օգնէ՛ ինձի: Մի՛ թողուր, որ մեղանշեմ Քեզի հանդէպ, քանի որ մոլորած եմ չար դէտերու կողմէ: Մի՛ թողուր, որ հետեւիմ սեփական կամքիս ու կորսուիմ մեղքերուս մէջ, այլ գթա՛ ինձի Զու ձեռքի ստեղծածիդ: Մի՛ վտարեր զիս, Տէ՛ր, քու աչքէդ եւ Սուրբ Հոգիդ մի՛ հաներ ինձմէ:  
Եփրեմ Ասորի

Հ Ո Գ Ե Ի Ո Ր  
Պ Ա Տ Գ Ա Ս

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՍՏՍԱՆ ԿԱՅ ՄԵՐ  
ԴԻՄԱՅ, ՈՒՍՏԻ ԶԱՊՐԻՆՔ ԱՇԽԱՐՀԻՆ  
ՀԱՍԱՐ**

«Անմիտ մարդ, այս զիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ» (Ղկ. 12.20): Յիսուս այս հաստատումով, կը յիշեցնէ աշխարհասէր մարդուն, որ աշխարհը իրեն պիտի չմնայ: Որքան ալ բան պատրաստենք, դիզենք, հաւաքենք, այդ բոլորը պիտի խլուին մեր ձեռքէն, երբ մեր հոգին խլուի մեզմէ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ

ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԱՐ

Աշխարհին կապուիլը՝ մեզ կը բաժնէ Աստուծմէ: Կրնանք հեռու մնալ աշխարհասիրութենէն, եթէ երբեք մեր մահուան վայրկեանը բերենք մեր աչքին դիմաց: Կրնանք հեռու մնալ մեղքէն, եթէ յիշենք, որ մեր դիմաց յարութիւն ու դատաստան կայ: Իսկ եթէ մոռնանք այս բոլորը, կրնանք ամէն տեսակ մեղքի մէջ իյնալ, ինչպէս Սուրբ Գրիգոր Նարեկացի կ'ըսէ. «Եթէ մէկը դատուելու վախ չունենայ, ե՞րբ կը դադրի մեղանշելէ: Եթէ յարութեան հաւատալով եւ դատաստանի յուսալով օրէ օր աւելի չարիք կը գործենք, ի՞նչ չարիք պիտի չգործէին՝ եթէ դատաստանի վախը չըլլար»:

**ՊԱՀԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ**

Ով, որ պահք կը պահէ առանց խոնարհութեան, իր պահեցողութեամբ զԱստուած է, որ կը բարկացնէ:  
(Եփրեմ Խուրի Ասորի)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

**ԵՐԲ ԱՆԻՐԱՎ ՄԱՐԿՈՑ  
ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՎՅՆԷ ՔԵԶ,  
Կարդա՛ ՄԱՂՄՈՍ 10**

Տէ՛ր, ինչո՞ւ հեռու կը մնաս, ինչո՞ւ ներկայութիւնդ չես յայտներ, երբ որ ներութեան մէջ եմ:

Ամբարիշտները ամբարտաւան կերպով կը հալածեն թշուառը. թող իրենց խորհած հնարքներուն մէջ իրենք բռնուին:

Ամբարիշտը կը պարծենայ իր չար ցանկութիւններովը: Ընչաքանց մարդը ինք կ'անիծէ եւ կ'անարգէ Տէ՛ր:

Ամբարիշտը բացայայտ լրբութեամբ՝ Աստուծոյ մասին չի խորհիր իսկ: Իրեն համար Աստուած չկայ:

Անոր գործերը միշտ յաջող են: Անիկա չի հասկնար Բարձալիդ դատաստանները եւ լուսանքներ կ'արձակէ իր թշնամիներուն դէմ: Ինքնիրեն կը խորհի. «Ոչինչ կրնայ զիս սասանեցնել, ո՛չ մէկ չարիք կրնայ ինձի հասնիլ»: Անէծքով, նենգութեամբ եւ սպառնալիքներով լեցուն է անոր բերանը: Իր խօսքերը ցաւ եւ դժբախտութիւն կը բերեն: Բնակավայրէն հեռու՝ դարան կը մտնէ, գաղտնօրէն սպաննելու համար անմեղ մարդիկը: Անոր աչքը շարունակ անբախտ գոհ մը կը փնտռէ: Առիծի պէս իր դարանին մէջ կը սպասէ, գաղտնօրէն յափշտակելու համար աղբատը եւ գայն կը յափշտակէ՝ իր ցանցին մէջ ձգելով: Կծկած կը պտուկի եւ իր ամբողջ գորութեամբ կ'իյնայ անպաշտպան մարդոց վրայ: Իր միտքին մէջ կը խորհի. «Բնաւ Աստուծոյ հոգը չէ, անիկա աչքերն ալ գոցեր է, որպէսզի բան չտեսնէ»:

Ե՛լ, ո՛վ Տէ՛ր: Պատժէ գանձեմք, ո՛վ Աստուած: Մի՛ մոռնար նեղեալները:

Ի՞նչպէս կըլլայ, որ ամբարիշտը քեզ կ'անարգէ, ո՛վ Աստուած խորհելով, թէ դուն իրմէ հաշիւ պիտի չպահանջես: